

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 51/3

1 դեկտեմբերի 2015 թ.

Քննարկվեց Ա/Ձ Աիդա Հովհաննիսյանի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 21.10.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 302250/03 որոշման դեմ:

Ա/Ձ Աիդա Հովհաննիսյանի գանգատում բերված փաստարկները.

Սույն թվականի հոկտեմբեր ամսին Ա/Ձ Աիդա Հովհաննիսյանը ստացել է ծանուցագիր, կազմված ՀՀ ՖՆ ԻՎ թիվ 3-րդ բաժնի կողմից, որով հրավիրվել է վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի քննությանը, համաձայն ՀՀ ՎԻՎ օր-ի 170.3 հոդվածի: Մաշտոցի հարկային տեսչությունում տեղեկացել է, որ եկամտային հարկի գծով ունի հարկային պարտավորություններ 92.000 դրամի չափով: Մասնավորապես, քանի որ գործունեություն չի իրականացրել, սակայն ուղարկել է շրջանառության հարկի Օ-յական հաշվարկներ, դրա հետևանքով հաշվարկվել են եկամտային հարկի կանխավճարներ:

Մաշտոցի ՀՏ կողմից վերահաշվարկ կատարելուց հետո պարզ է դարձել, որ առկա է 62.729 դրամի գերավճար: Այսինքն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթ հարուցելու հիմքը վերացել է, ինչի մասին գանգատաբերը տեղյակ է պահել իրավաբանական վարչության աշխատակցին:

27.10.2015 թ-ին փոստային ծառայության միջոցով ստացվել է ծանուցագիր այն մասին, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 21.10.2015թ-ին կայացվել է թիվ 302250/03 որոշումը, համաձայն որի գանգատաբերը ենթարկվել է վարչական պատասխանատվության 20.000 դրամի չափով:

Ելնելով այն հանգամանքից, որ ծանուցագիրը ստանալու օրվա դրությամբ որևէ հարկային պարտավորություն առկա չի եղել Ա/Ձ Աիդա Հովհաննիսյանը խնդրում է վերացնել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից կայացված թիվ 302250/03 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննելով 15.10.2015 թ-ի 1094 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը պարզել է, որ Ա/Ձ Աիդա Հովհաննիսյանը համաձայն հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին թիվ 651/03 որոշման, օրենքով սահմանված ժամկետում չի վճարել հարկերը:

Նկատի ունենալով, որ արարքը նախատեսված է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 170.3-րդ հոդվածով, ուստի

ղեկավարվելով նույն օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 244.2-րդ, 281-րդ հոդվածներով և 282-րդ հոդվածի 1-ին կետով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 21.10.2015 թ-ին ընդունվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 302250/03 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Ա/Ձ Աիդա Հովհաննիսյանի նկատմամբ վարչական տույժ նշանակելու մասին՝ գումարով 20.000 դրամի չափով:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ Ա/Ձ Աիդա Հովհաննիսյանը, ստանալով ՀՀ ՖՆ ԻՎ թիվ 3-րդ բաժնի կողմից ուղարկված ծանուցագիրը, այցելել է Մաշտոցի հարկային տեսչություն՝ պարզելու համար առաջացած հարկային պարտավորությունների պատճառը: Մաշտոցի ՀՏ-ում Ա/Ձ Աիդա Հովհաննիսյանին տեղեկացվել է, որ 2013 և 2014 թ.թ. համար եկամտային հարկի տարեկան հաշվարկներ չներկայացվելու հետևանքով հաշվարկվել են եկամտային հարկի կանխավճարներ, որոնց ընդհանուր գումարը կազմել է 92.000 դրամ:

22.10.2015 թ-ին Ա/Ձ Աիդա Հովհաննիսյանի կողմից ներկայացվել են 2013 և 2014 թ.թ. համար եկամտային հարկի տարեկան հաշվարկները, որի հետևանքով Մաշտոցի ՀՏ կողմից կատարվել է Ա/Ձ Աիդա Հովհաննիսյանի պարտավորությունների վերահաշվարկ: Արդյունքում պարզվել է, որ առկա է ոչ թե 92.000 դրամի պարտավորություն, այլ՝ 62.729 դրամի գերավճար:

Տվյալ դեպքում Ա/Ձ Աիդա Հովհաննիսյանի կողմից հարկերը սահմանված ժամկետներում չվճարելու հիմքով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 21.10.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 302250/03 որոշմամբ կիրառվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 170.3-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվությունը, այն դեպքում, երբ նշված պարտավորությունն իրականում առկա չի եղել: Սակայն հարկ է նշել, որ Ա/Ձ Աիդա Հովհաննիսյանի պարտավորությունների բացակայության հանգամանքը պարզանբանվել է միայն 22.10.2015 թ-ից հետո, երբ նրա կողմից ներկայացվել են 2013 և 2014 թ.թ. եկամտային հարկի տարեկան հաշվարկները: Այսինքն, պարտավորությունների բացակայության հանգամանքը պարզանբանվել է ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 21.10.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 302250/03 որոշումը կայացվելուց հետո ընկած ժամանակահատվածում:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Բեկանել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 21.10.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 302250/03 որոշումը՝ անվ գործը՝ կարճել:

Հանձնաժողովի նախագահ՝

